ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՍՄԿԿ XXVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿՈՄՊԼԵՔՍԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

ԳՈՒՐԳԵՆ ԳԵՂԱՄՅԱՆ

Կուսակցության ագրարային քաղաքականությունը նրա տնտեսական ընդհանուր քաղաքականության անբաժանելի, բաղկացուցիչ մասն է, որի բազմակողմանի հիմնավորումը տվել է Վ. Ի. Լենինը։ Մեր երկրում սոցիալիստական շինարարության տարբեր փուլերում ագրարային քաղաքականության կրած փոփոխությունները բխել են լենինյան կոոպերատիվ պլանից և պայմանավորված են եղել նրանով։ Գլխավորելով գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար մղվող պայքարը, կուսակցությունը կարողացավ սեղմ ժամկետում կոոպերացիայի պարզագույն ձևերից անցնել արտադրական կոոպերացմանը և գյուղում կազմակերպել խոշոր, կոլեկտիվ տնտեսություններ, որոնք հիմք ծառայեցին նոր, կոլտնտեսային գյուղացիության ձևավորման համար։ Հանձինս կոլտնտեսությունների, կուսակցությունը գտավ մանր գյուղացիական տնտեսությունները զարգացման սոցիալիստական ուղին փոխադրելու հուսալի միջոց։ Սոցիալիստական շինարարության տարիներին կոլտնտեսային կարգի ձեռք բերած նվաճումները հիմք հանդիսացան սովետական մարդկանց նյութական բարեկեցությունը բարձրացնելու համար։ «Ագրարային հարցի մասին լենինյան ուսմունքը, նրա կոոպերատիվ պլանի գաղափարներն ու սկզբունքները,— ՍՄԿԿ Կենտկոմի 1978 թ. հուլիսյան պլենումում ասել է Լ. Ի. Բրեժնևը,— եղել են և մնում են մեր կուսակցության քաղաքականության հիմնաքարը։ ՍՄԿԿ-ն անխզելիորեն առաջնորդվում է դրանցով և, հաշվի առնելով պատմական կոնկրետ պայմանները, շարունակում է զարգացնել»[1]։

Անընդհատ կատարելագործելով գյուղի տնտեսական և հասարակական հարաբերությունները, սովետական իշխանությունը ռեալ պայմաններ է ստեղծում նրա կոմպլեքսային և արագ տեմպերով զարգացման համար։ Կուսակցության ագրարային քաղաքականությունն արդի փուլում նախատեսում է գյուղատնտեսության բոլոր ճյուղերի համաչափ զարգացում, գյուղատնտեսական աշխատանքի հետագա ինդուստրացում, աշխատանքների կազմակերպման հետագա կատարելագործում։

ՍՄԿԿ XXVI համագումարում խոսելով սովետական ժողովրդի բարեկեցության բարձրացման մասին Լ. Ի. Բրեժնևը նշեց, որ չնայած վերջին տարիներին ձեռք բերած նվաճումներին, գյուղատնտեսության զարգացման մակարդակը, նրա տնտեսական ցուցանիշներն ու կարևորագույն մթերքների արտա-

---

[1] Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 7, Երևան, 1980, էջ 509։

դրության աճի տեմպերը դեռևս չեն բավարարում երկրի պահանջները և չեն համապատասխանում եղած հնարավորություններին։ Համագումարն ընդգծեց, որ բնակչության սպասարկման խնդրում նկատվող դժվարությունները հաղթահարելու համար մշակվում է պարենային ծրագիր, որի «նպատակն է հնարավորին չափ ավելի սեղմ ժամկետում լուծել բնակչությանը մթերքների անխափան մատակարարման խնդիրը»[2]։ Պարենային ծրագրի հիմքը, անշուշտ, գյուղատնտեսության հետագա վերելքն է, որի համար համագումարը մի շարք կոնկրետ միջոցառումներ մշակեց։

Կուսակցության այժմյան ագրարային քաղաքականության հիմնական սկզբունքները մշակվեցին ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թ. մարտյան պլենումում։ Այն շրջադարձային նշանակություն ունեցավ և, ըստ էության, նոր փուլ հանդիսացավ գյուղատնտեսական արտադրության վերելքի ու գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման գործում։ Մարտյան պլենումի որոշումները հետագա կոնկրետացման ենթարկվեցին և հարստացան ՍՄԿԿ Կենտկոմի պլենումների և հատկապես XXIV, XXV, XXVI համագումարների որոշումներում, որտեղ կանխագծվեցին գյուղատնտեսական արտադրության և գյուղական կյանքի զարգացման բոլոր հիմնական ուղղությունները։ ՍՄԿԿ Կենտկոմի մարտյան պլենումից հետո գյուղատնտեսությունը բռնեց անշեղ վերելքի և ներդաշնակ զարգացման ուղին։ Կուսակցության ագրարային ծրագրի կենսագործման ճանապարհին կարևոր նշանակություն ունեցավ ՍՄԿԿ Կենտկոմի 1978 թ. հուլիսյան պլենումը, որտեղ միջոցառումներ մշակվեցին գյուղատնտեսությունը ժողովրդական տնտեսության բարձր զարգացած ճյուղ դարձնելու համար և ուղենշվեցին նրա առաջընթացի հեռանկարները։ «Գյուղատնտեսության բնագավառում առաջիկա աշխատանքի գլխավոր ուղղությունները,— կուսակցության XXVI համագումարում ասաց Լ. Ի. Բրեժնևը,— նշվեցին ՍՄԿԿ Կենտկոմի 1978 թ. հուլիսյան պլենումի որոշումներում։ Դրանք պահպանում են իրենց ուժը»[3]։

Զարգացած սոցիալիզմի տարիներին մշակված կուսակցության ագրարային քաղաքականության նոր կուրսը կարևոր ավանդ հանդիսացավ մարքսլենինյան տեսության մեջ։ Այն կառուցված է մեր երկրի տնտեսական և հասարակական կյանքի համակողմանի վերլուծության վրա։ Դա ըստ էության սովետական ժողովրդի բարեկեցության աճի, գյուղական բնակչության աշխատանքային և կենցաղային պայմանների բարելավման, գյուղի և քաղաքի միջև գոյություն ունեցող տարբերությունների վերացման, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հետագա ամրապնդման, մեր երկրում կոմունիստական հասարակարգի կառուցման ընդարձակ պլան է։ Մշակելով գյուղատնտեսության զարգացման կոմպլեքսային ծրագիր, կուսակցությունը հիմնական ուշադրությունը կենտրոնացնում է հետևյալ հարցերի լուծման վրա. գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ու կառավարման կատարելագործում, կադրերի ու մասնագետների պատրաստում, կապիտալ ներդրումների ավելացում, աշխատավորության նյութական շահագրգռվածության

---

2 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, Երևան, 1981, էջ 74։

3 Նույն տեղում, էջ 74։

բարձրացում, քիմիացում և մեքենայացում, գիտության ու առաջավոր փորձի նվաճումների լայն արմատավորում։ Կուսակցության XXVI համագումարը, բնութագրելով այժմ կիրառվող ագրարային քաղաքականության սոցիալ-տնտեսական էությունը, նշեց, որ նրա հիմնական խնդիրը գյուղատնտեսության բոլոր ճյուղերի ներդաշնակ և այնպիսի բարձր մակարդակով զարգացումն է, որպեսզի լիովին բավարարվեն երկրի հարաճուն պահանջները։ Դա, անշուշտ, գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման ուղի է, որի համար, ինչպես նշվեց համագումարում, ստեղծվել են բոլոր անհրաժեշտ նախադրյալները։ Ավելին, 1970-ական թվականներին արդեն առկա էին ինտենսիվացման արդյունքները։ «Գյուղատնտեսության ինտենսիվացումը թույլ է տվել,— նշվեց ՍՄԿԿ XXVI համագումարում,— նույնիսկ աշխատողների թվի կրճատման դեպքում, անշեղորեն մեծացնել արտադրանքի ծավալը։ Մեկ հեկտարի հաշվով անցած տասնամյակում նախորդ տասնամյակի համեմատությամբ, այն աճել է 1,3 անգամ»[4]։

Գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացումը զգալիորեն նպաստում է նաև նրան սպասարկող արդյունաբերական ճյուղերի արտադրողական ուժերի զարգացմանը և արդյունավետության բարձրացմանը։ Արդի պայմաններում գյուղատնտեսության հետագա առաջընթացն անհերևակայելի է առանց արդյունաբերության կողմից գյուղի պատվերները ժամանակին և բարձր որակով կատարելու։ Ուստի, մշակելով գյուղատնտեսության վերելքի կոմպլեքսային ծրագիրը, կուսակցությունը միաժամանակ պլանավորում է նրա հետ անմիջապես առնչվող արդյունաբերական արտադրանքի համապատասխան աճ և համաչափ զարգացում։

Կուսակցության այժմյան ագրարային ծրագրում հատուկ տեղ է հատկացվում աշխատավորության նյութական շահագրգռվածության բարձրացմանը։ «Բոլոր պլանների, բոլոր ծրագրերի հաջողությունը,— ասել է Լ. Ի. Բրեժնևը,— կախված է..., գյուղի աշխատավորների բարեխիղճ աշխատանքից, ուրեմն նաև՝ բարոյական ու նյութական խթանման սիստեմից»[5]։ Դրա համար, առաջին հերթին, անհրաժեշտ է է՛լ ավելի կատարելագործել գյուղատնտեսական արտադրանքի մթերումների և գնումների գոյություն ունեցող կարգը, որն անմիջական ազդեցություն ունի կոլտնտեսությունների եկամտաբերության և շահույթի բարձրացման վրա։ ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թ. մարտյան պլենումը դատապարտեց այն ոչ նորմալ վիճակը, երբ գյուղատնտեսական մթերքների ու գնումների գների կամայական խախտումների հետևանքով մի շարք մթերքների մթերումներից ստացված եկամուտը նույնիսկ չէր ծածկում դրանց արտադրության վրա կատարված ծախսերը։ Հասկանալի է, որ նման պայմաններում տնտեսությունները շահագրգռված չէին տվյալ մթերքների արտադրության ավելացմամբ։ Մարտյան պլենումի որոշմամբ զգալիորեն բարձրացվեցին գյուղատնտեսական մթերքների մթերումների գները և, ելնելով տվյալ գոտու կոնկրետ պայմաններից ու զարգացման հեռանկարներից, որոշակի փոփոխության ենթարկվեց մթերումների չափը։ Միայն գների կարգավորումից Հա-

---

4 Նույն տեղում, էջ 56։

5 Նույն տեղում, էջ 77։

յաստանի գյուղատնտեսությունը 1965 թ. 33 մլն. ռ. շահույթ ստացավ[6]։ Բացի այդ, աշխատավորության շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով որոշվեց, որ անհրաժեշտ է սահմանել մթերումների կայուն չափ՝ հինգ տարիների համար, որպեսզի յուրաքանչյուր տնտեսություն կարողանա իր հնարավորություններն արդյունավետ օգտագործել և տարեցտարի ավելացնել դրամական եկամուտները։ Սակայն առանձին տեղական ղեկավարների անճարակությունը քողարկելու և տվյալ շրջանի կամ տնտեսական գոտու պլանները մի կերպ կատարելու համար, հաճախ, տեղերում անընդհատ բարձրացվում էին արտադրական լավ ցուցանիշների հասած տնտեսությունների պլանները, որի հետևանքով նրանց եկամուտներն արտադրության աճին համապատասխան չէին ավելանում և մի քանի տարի անց այդ առաջավոր տնտեսությունները գրվում էին հետ մնացողների շարքերը։ Կուսակցությունը միշտ քննադատել է նման խեղաթյուրումները։ ՍՄԿԿ XXVI համագումարը մեկ անգամ ևս դատապարտեց «...կուսակցական և սովետական որոշ աշխատողների կողմից կոլտնտեսությունների և սովխոզների տնտեսական գործունեությանը ցույց տրվող անհիմն միջամտության պրակտիկան» և կրկին անգամ ընդգծեց, որ անհրաժեշտ է սահմանել «գյուղատնտեսական մթերքների գնումների հինգ տարվա միասնական պլան՝ բաշխելով ըստ տարիների»[7]։ Անշուշտ, դա զգալիորեն կնպաստի կոլտնտեսային արտադրության բարձրացման խնդրում տեղական նախաձեռնության աճին։ ՍՄԿԿ XXVI համագումարում առանձնահատուկ խոսվեց այն մասին, որ գյուղատնտեսության աշխատողներին պետք է շահագրգռել ոչ միայն հանրային, այլև օժանդակ տնտեսության արդյունավետության բարձրացմամբ։ Կուսակցությունը դատապարտեց ոչ հեռավոր անցյալում օժանդակ տնտեսությունը սահմանափակելու ու վերացնելու սխալ քաղաքականության վնասակար հետևանքները և որոշակի միջոցառումներ մշակեց գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման գործում օժանդակ տնտեսության դերը բարձրացնելու մասին։ «Սոցիալիստական գյուղատնտեսության հիմքը եղել և մնում են կոլտնտեսություններն ու սովխոզները,— ՍՄԿԿ XXVI համագումարում ասաց Լ. Ի. Բրեժնևը։— Բայց դա ամենևին չի նշանակում, թե կարելի է անտեսել անձնական, օժանդակ տնտեսությունների հնարավորությունները։ Փորձը վկայում է, որ նման տնտեսությունները կարող են էական նեցուկ լինել մսի, կաթի և մի քանի այլ մթերքների արտադրության գործում։ Աշխատավորներին պատկանող այգիները, բանջարանոցները, թռչունները, անասունները մեր ընդհանուր հարստության մի մասն են»[8]։ Օժանդակ տնտեսությունների մշակումը խրախուսելը, անշուշտ, չի նշանակում, թե դրանք պետք է դառնան աշխատողի հիմնական եկամուտի աղբյուրը՝ տեղիք տան շուկայական սպեկուլյացիայի և այլ չարաշահումների։

Սոցիալիստական գյուղատնտեսության արագացված տեմպերով զարգացման կոմպլեքսային ծրագրում կուսակցությունը շատ կարևոր տեղ է

---

6 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվ (այսուհետև ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 1, ց. 92, գ. 50, թ. 24։

7 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, էջ 77։

8 Նույն տեղում, էջ 78։

հատկացնում գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումների ավելացման։ Փաստորեն կապիտալ ներդրումները գյուղի աշխատողների առջև դրված վիթխարի խնդիրներին համապատասխան չէին ավելացվում և նրանք բավականին ծանր վիճակի մեջ էին ընկնում։ Եթե մինչև 1975 թ. գյուղատնտեսության մեջ ներդրվել է 320 մլդ. ռ., ապա միայն 1965—1975 թթ. ներդրվեց 213 մլդ. ռ.[9]։ Մեր հանրապետության գյուղատնտեսության մեջ 1945—1965 թթ. պետության կողմից ներդրվել է 414 մլն. ռ., իսկ 1965—1979 թթ.՝ 1,926 մլդ. ռ. կամ մոտ 5 անգամ ավել[10]։ Դրա շնորհիվ 1965 թ. համեմատությամբ 1980 թ. կոլտնտեսային հիմնական արտադրական ֆոնդերի արժեքն աճեց ավելի քան 3 անգամ։ Այդ կուրսը շարունակվելու է նաև 11-րդ հնգամյակի տարիներին։ Կապիտալ ներդրումների անընդհատ ավելացումը գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման հիմնական նախապայմանն է, որը հիմք է հանդիսանում այն աստիճանաբար այդյունաբերական ուղու վրա փոխադրելու համար։ «Մենք այսուհետև էլ գյուղին կհատկացնենք ֆինանսական և նյութական խոշոր ռեսուրսներ,— ՍՄԿԿ XXVI համագումարում ասաց Լ. Ի. Բրեժնևը,— կշարունակենք այդ ճյուղի պլանաչափ փոխադրումն ինդուստրիալ հիմքի վրա։ Բայց հիմա ծանրության կենտրոնը, և դա 80-ական թվականների ագրարային քաղաքականության տարբերիչ առանձնահատկությունն է, տեղափոխվում է կապիտալ ներդրումների փոխհատուցման վրա, գյուղատնտեսության մթերատվության աճի, ագրոարդյունաբերական կոմպլեքսի բոլոր ճյուղերի հետ նրա կապերի խորացման և կատարելագործման վրա»[11]։ Գյուղատնտեսության առջև դրված բավականին բարդ և դժվար խնդիրների լուծմանը մեծապես նպաստում է կապիտալ ներդրումների ավելացման կուրսը, որը հետևողականորեն կենսագործվում է ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թ. մարտյան պլենումից հետո։

Կուսակցության ագրարային քաղաքականության նոր կուրսի շնորհիվ որակական փոփոխությունների ենթարկվեցին մեր երկրի գյուղատնտեսության արտադրողական ուժերը, նրանց կառուցվածքն ու բնույթը։ Ուստի, զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանը պետք է բնութագրել նաև որպես գյուղատնտեսական ինդուստրիայի զարգացման նոր փուլ, երբ կուսակցությունը վճռական միջոցներ ձեռնարկեց նախկինում թույլ տրված սխալներն ուղղելու և գյուղատնտեսության համար միանգամայն նոր որակի բազա ստեղծելու ուղղությամբ։ Եթե նախորդ փուլերում գյուղատնտեսական մեքենաներն արտադրվում էին հիմնականում որևէ կոնկրետ աշխատանք կատարելու համար, ապա այժմ նրանք նախատեսվում են արտադրության կոմպլեքսային մեքենայացման, ավտոմատացման համար։ Եթե 1965 թ. հայրենական արդյունաբերությունը 490 անուն գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ էր արտադրում, 1975 թ.՝ մոտ 1400, ապա 10-րդ հնգամյակի տարիներին՝ ավելի քան 2900 անուն։ Քանակական աճի հետ մեկտեղ զգալիորեն բարելավվել և կատարելագործվել են գյուղատնտեսական մեքենաները։ Խոսելով այդ մասին,

---

9 «Курсом мартовского пленума», М., 1975, с. 19.

10 «Народное хозяйство Советской Армении за 60 лет», Ереван, 1980, с. 175.

11 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության ոլորտում, էջ 75։

կուսակցության XXVI համագումարում Լ. Ի. Բրեժնևն ասաց. «Խոսքը վերաբերում է նաև գյուղատնտեսության տեխնիկական զինման հետագա աճին, գյուղին մատակարարվող մեքենաների ու սարքավորումների արտադրողականության դիմացկունության և հուսալիության բարձրացմանը...»[12]։ Եթե 1960 թ. մեր հանրապետության գյուղատնտեսությանը մատակարարվել է 703 տրակտոր, 368 ավտոմեքենա և 120 հացահատիկային կոմբայն, ապա 1975 թ.՝ 1744 տրակտոր, 1983 ավտոմեքենա և 150 կոմբայն[13]։ Այժմ փաստորեն փոխվում են ոչ միայն գյուղատնտեսական աշխատանքի միջոցները, այլև նրանց բնույթը։ Գյուղում հանդես են եկել բազմաթիվ նոր մասնագիտություններ, որոնցում հաջողությամբ զուգակցվում են ֆիզիկական ու մտավոր աշխատանքները և աշխատանքն ավելի հետաքրքիր ու ստեղծագործ բնույթ է ստանում (էլեկտրիկ, օպերատոր, խառատ, լաբորանտ և այլն)։ Սակայն անհրաժեշտ է նշել, որ տեղերում դեռևս անբավարար է օգտագործվում գյուղատնտեսության հարուստ նյութատեխնիկական բազան։ Թույլ է հատկապես այգեգործության, բանջարա-բոստանային կուլտուրաների և անասնապահության մեքենայացումը։

Կոմպլեքսային մեքենայացումը և ավտոմատացումը գյուղատնտեսության ինդուստրացման հիմքն է։ Սակայն գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդումից բացի, նրա առաջընթացն անհրաժեշտ է առանց գիտատեխնիկական հեղափոխության նվաճումների մասսայական ներդրման։ Իսկ դա անհնար է առանց գյուղատնտեսական արտադրության մեջ էլեկտրաէներգիայի մասսայական օգտագործման։ Սովետական իշխանության տարիներին երկրի էլեկտրիֆիկացման ուղղությամբ կատարվող վիթխարի աշխատանքները նոր թափ ու բովանդակություն ստացան զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում։ Այդ փուլին հատկանշական է, որ տարեցտարի ավելանում է էլեկտրաէներգիան արտադրական նպատակով օգտագործելու միտումը։ Եթե 1965 թ. մեր հանրապետության կոլտնտեսություններն ու սովխոզները արտադրական նպատակով օգտագործել են 77,6 մլն. կվատ ժամ էլեկտրական էներգիա, ապա 1979 թ.՝ 370,8 մլն. կվատ ժամ[14]։ Անշուշտ, դա զգալիորեն նպաստում է գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացմանը։

Կուսակցության XXVI համագումարը նշեց, որ զարգացած սոցիալիզմի պայմաններում գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման հետ մեկտեղ մեծ ուշադրություն է դարձվում գյուղատնտեսության մելիորացման աշխատանքներին։ ՍՄԿԿ Կենտկոմի 1966 թ. մայիսյան պլենումը հատուկ քննելով մեր երկրում ջրատնտեսական շինարարության հարցերը, հեռանկարային ծավալուն ծրագիր մշակեց, որի կենսագործմամբ, ցանքատարածությունների ավելացումից բացի, ռեալ հիմքեր են ստեղծվում բարձր և կայուն բերք ստանալու համար։ Խոսելով իռիգացիոն շինարարության ծավալման մասին, Լ. Ի. Բրեժնևը նշել է. «Դա ընթացիկ կամպանիա չէ, այլ գյուղատնտեսության բնագավառի տևական ժամանակաշրջանի ծրագիրն է, որը պահանջում է հսկայական ջանքեր և ոչ քիչ կապիտալ ներդրումներ ու նյութա-

12 Նույն տեղում, էջ 76։

13 «Народное хозяйство Армянской ССР за 1977 г.», Ереван, 1978; с. 74.

14 «Народное хозяйство Советской Армении за 60 лет», с. 60.

տեխնիկական միջոցներ։ Այն խարսխվում է գիտության և պրակտիկայի տվյալների վրա, ներկայումս սոցիալիստական էկոնոմիկայի ունեցած ռեալ հնարավորությունների վրա»[15]։ Այդ աշխատանքները բացառիկ նշանակություն ունեն Միջին Ասիայի և Անդրկովկասի համար։ Հայաստանի բնակլիմայական պայմաններում գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացումն անհրաժեշտ է առանց ջրաշինարարական աշխատանքների լայն ծավալման։ Գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացումից բացի, այն մեր հանրապետության սակավահողությունը մեղմացնելու հիմնական միջոցն է։ Հայտնի է, որ միջին հաշվով Միության մեջ մեկ շնչին ընկնում է 0,92 հա վարելահող և 2,5 հա գյուղատնտեսական հողատարածություն, իսկ Հայկական ՍՍՀ-ում այն կազմում է համապատասխանաբար 0,17 և 0,49 հա։ Ոռոգման ցանցի ընդլայնումը նպաստում է ինչպես հողի արդյունավետության բարձրացմանը, այնպես էլ հանրապետության բնակչության անհամաչափ տեղաբաշխումը որոշ չափով կարգավորելուն։ Այն որոշակիորեն անդրադառնում է տարբեր շրջանների գյուղատնտեսության զարգացման հեռանկարների վրա։ Եթե մինչև 1950-ական թվականները ոռոգման ցանցը հիմնականում ընդլայնվում էր Արարատյան դաշտավայրում, ապա հետագայում հատուկ ուշադրություն դարձվեց նախալեռնային ու լեռնային գոտու վրա և ջրանցքների ու ջրամբարների կառուցման ծանրության կենտրոնը փոխադրվեց այնտեղ։ Զարգացած սոցիալիզմի տարիներին հանրապետության գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումների շուրջ $^1/_3$-ը հատկացվել է ջրաշինարարական աշխատանքներին։ ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը 1972 թ. դեկտեմբերին ծավալուն որոշում ընդունեցին հողերի մելիորացման, ոռոգելի հողատարածությունների օգտագործման բարելավման մասին, արդարացիորեն նշելով, որ ներկա պայմաններում չպետք է բավարարվել միայն ոռոգելի հողատարածությունների ընդարձակմամբ, այլ անհրաժեշտ է կոմպլեքսային եղանակով լուծել դրանց արդյունավետ օգտագործման հետ կապված բոլոր հարցերը[16]։ Միայն 10-րդ հնգամյակի տարիներին հանրապետության ոռոգելի հողատարածություններն ավելացան մոտ 30 հազար հեկտարով։ Ոռոգման համար կատարվող խոշոր ծախսերը, ինչպես նշվեց ՍՄԿԿ XXVI համագումարում, պետք է 1980-ական թվականներին փոխհատուցվեն, շեշտակիորեն ավելացնելով գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։

Սակայն Հայաստանը ոչ միայն սակավահող, այլև սակավաջուր հանրապետություն է։ Այստեղ մեկ շնչին հասնող տարեկան ջրի քանակը 5—6 անգամ պակաս է միութենական միջինից։ Ուստի խոշոր միջոցներ են հատկացվում գարնանային և աշնանային հեղեղումների ջրերն արդյունավետ օգտագործելու նպատակով հարմարավետ վայրերում ջրամբարներ կառուցելու համար։ Հատուկ ուշադրություն է դարձվում նաև ոռոգման ցանցում ջրի կորուստը կանխելու վրա, որը մեր հանրապետությունում բավականին բարձր է (անցնում է 40 %-ից)։ Բավարար չէ նաև ոռոգելի հողատարածությունների օգտագործման վիճակը։ Ինչպես նշվեց ՀԿԿ XXVII համագումարում, չնայած ոռոգման ցանցի ընդլայնման և ջրարբի տարածությունների ավելացման նը-

---

15 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 4, Երևան, 1974, էջ 542։
16 Մլի ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 96, թ. 104, գ. 146։

պատակով կատարվող խոշոր ծախսերին, տեղերում հողերի, այդ թվում և ոռոգվող վարելահողերի շռայլումներ են թույլ տրվում։ Հանրապետության սակավահողության պայմաններում միջին հաշվով ամեն տարի վարելահողերի 7 %-ը դուրս է մնում գյուղատնտեսական շրջանառությունից, մինչդեռ դրանց զգալի մասը ջրարբի տարածություններ են։

Կուսակցության ագրարային նոր ծրագրում գյուղատնտեսական արտադրության բարձրացմանն ուղղված հիմնական միջոցառումներից մեկը համարվեց քիմիացումը։ Գիտատեխնիկական առաջադիմության արդի պայմաններում գյուղատնտեսության ինտենսիվ զարգացումը հնարավոր չէ առանց քիմիական պարարտանյութերի և վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարելու համար քիմիկատների մասսայական օգտագործման։ Եթե 1965 թ. մեր հանրապետության գյուղատնտեսությանը մատակարարվել է 142 հազ. տ հանքային պարարտանյութ, ապա 1979 թ.՝ ավելի քան 370 հազ. տ կամ մոտ 2,8 անգամ ավել[17]։ Ուշագրավ է, որ վերջին շրջանում խիստ ավելանում է խտացված և կոմպլեքսային պարարտանյութերի արտադրությունը, որն ավելի լայն կիրառում ունի գյուղատնտեսության մեջ և աչքի է ընկնում բարձր արդյունավետությամբ։ Որոշակի հաջողություններ են ձեռք բերվել նաև պարարտանյութերը նպատակասլաց օգտագործելու համար անհրաժեշտ մեքենաների արտադրության բնագավառում։ Կյանքը, առաջավոր տնտեսությունների փորձը կրկին հաստատեցին, որ կոլտնտեսությունների և սովխոզների ագրոքիմիական սպասարկման կատարելագործումը զգալիորեն նպաստում է գյուղատնտեսական արտադրության բարձրացմանը։

Կուսակցության ագրարային քաղաքականության կենսագործման արդի փուլում խնդիրների բարդությունն ու մասշտաբայնությունը պահանջում են հատուկ ուշադրություն դարձնել կադրերի ու մասնագետների պատրաստման տեղաբաշխման և նպատակասլաց օգտագործման վրա։ 1965 թ. մարտյան պլենումից հետո ՀԿԿ Կենտկոմը և շրջանային կուսակցական կոմիտեները գյուղատնտեսական արտադրության անմիջական ղեկավարների շարքերն անընդհատ համալրում են գործիմաց և նախաձեռնող կադրերով։ Այսպես, 1965 թ. հանրապետության կոլտնտեսություններում ու սովխոզներում աշխատում էին 2543 բարձրորակ մասնագետներ, իսկ 1980 թ. դրանց թիվը հասավ 4448-ի[18]։ Տնտեսությունների դիրեկտորներն ու նախագահները հիմնականում բարձրագույն կրթությամբ մասնագետներ են։ Զգալիորեն բարելավվել է բրիգադավարների, ֆերմաների վարիչների և օղակավարների կազմը։ Շեշտակիորեն աճել է գյուղատնտեսական մեխանիզատորների թիվը։ Ներկա պայմաններում, երբ արմատապես վերափոխվել է գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան, արտադրության կենտրոնական դեմքը մեխանիզատորական կադրերն են։ Եթե 1968 թ. հանրապետության գյուղատնտեսության մեջ աշխատում էին 13,7 հազ. մեխանիզատոր, ապա 1980 թ.՝ 19,4 հազ.։ Չնայած դրան, անհրաժեշտ է նշել, որ վերջին շրջանում գյուղատնտեսության մեքենայական բազան ավելի արագ տեմպերով է ավելանում, քան մեխանիզատորական կադրերի պատրաստումը։ Այսպես, 1965—1977 թթ.

---

17 «Народное хозяйство Армянской ССР за 60 лет», с. 123.

18 Նույն տեղում, էջ 140։

Հայկական ՍՍՀ կոլտնտեսություններում տրակտորների թիվն ավելացել է 65 %-ով, իսկ տրակտորիստների ու կոմբայնավարների թիվը՝ 16,4։

ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թ. մարտյան պլենումի մշակած ագրարային նոր կուրսի հետևողական կենսագործման շնորհիվ սոցիալիստական գյուղատնտեսությունը խոշոր նվաճումների հասավ։ 100 հա գյուղատնտեսական հողատարածության հաշվով, 1965 թ. համեմատությամբ, մսի արտադրությունը Հայաստանում 1979 թ. աճեց 87, կաթինը՝ 43, հացահատիկի բերքատվությունը՝ 84, ծխախոտինը՝ 34, բանջարեղենինը՝ 48, խաղողինը՝ 47 %-ով, իսկ ձվինը՝ 3 անգամ[19]։ Սակայն գյուղատնտեսության զարգացման մակարդակը դեռևս հնարավորություն չի տալիս լիովին բավարարելու աշխատավորության պահանջմունքները։ Արդի պայմաններում սոցիալիստական գյուղատնտեսության հնարավորություններն ավելի արդյունավետ օգտագործելու նպատակով հատուկ ուշադրություն է դարձվում գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման և համակենտրոնացման, արտադրական հարաբերությունների կատարելագործման հարցերի վրա։ Կուսակցության համագումարներում բազմիցս նշվել է, որ գյուղատնտեսության ինտենսիվացումն անհնար է առանց կառավարման կատարելագործման ու բարելավման։ Բանն այն է, որ սոցիալիստական հասարակարգի պայմաններում նույնպես արտադրողական ուժերի լուսն զարգացումը պահանջում է անընդհատ կատարելագործել արտադրական հարաբերությունները։ Գյուղում իշխող մանր և բաղմաճյուղ տնտեսությունները արգելակում են գիտատեխնիկական հեղափոխության նվաճումներն արտադրության մեջ լայնորեն ներդնելուն։ Կյանքը հրամայողաբար պահանջում է անցնել խոշոր, մասնագիտացված տնտեսությունների կազմակերպմանը, որը լայն ասպարեզ կբացի նրա ավտոմատացման և ինտենսիվացման առջև։ «Արտադրության բազմաճյուղ, մասնատված կառուցվածքի մինչև օրս պահպանված գծերը,— նշել է Լ. Ի. Բրեժնևը,— որոնք ժառանգություն են մնացել անցյալից, կասեցնում են գիտատեխնիկական վերաշինման պրոցեսը, արգելակում գյուղատնտեսության ինտենսիվացումը»[20]։ Այդ բոլորով հանդերձ, գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման վրա մեր հանրապետությունում իրենց կնիքն են դնում նաև սակավահողությունն ու ռելիեֆի խիստ կտրտվածությունը։ 1974 թ. ամեն մի կոլտնտեսություն միջին հաշվով ուներ 0,46 հազ. հա ցանքատարածություն, սովխոզը՝ 0,6 հազ. հա։ Հողակտորների մեծ մասի տարածությունը չէր անցնում 5 հեկտարից։ Հասկանալի է, որ մանր տարածությունների վրա մշակվող կուլտուրաները չեն կարող բարձր արդյունավետ լինել։

Վիճակը նույնն է նաև անասնապահության մեջ։ Չնայած 100 հա գյուղատնտեսական հողատարածության հաշվով մեր հանրապետության անասունների գլխաքանակը զգալիորեն գերազանցում է միութենական միջին ցուցանիշները, սակայն դեռևս ցածր է անասնապահության մասնագիտացման և համակենտրոնացման մակարդակը, որի պատճառով էլ անբավարար աշխատանքներ են կատարվում ֆերմաներում աշխատատար պրոցեսների մեքենայացման ուղղությամբ։ Ուսումնասիրությունները վկայում են, որ նույ-

19 Կ. Ս. Դեմիրճյան, Սովետական Հայաստան, Երևան, 1981, էջ 65։
20 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 4, Երևան, 1974, էջ 607։

նանման պայմաններում գտնվող ֆերմաներում որքան քիչ է անասունների գլխաքանակը, նույնքան բարձր է արտադրվող մթերքների ինքնարժեքը[21]։ Պարզ է, որ մանր ֆերմաներում հիմնականում իշխում է ձեռքի սակավարդյունավետ աշխատանքը, որը չի կարող բացասաբար չանդրադառնալ արտադրության կազմակերպման, արտադրանքի ինքնարժեքի ու ծավալի ավելացման վրա։ Փաստորեն արդի պայմաններում մանր և բազմաճյուղ տնտեսությունների շրջանակներում հնարավոր չէ բարձրացնել արտադրության արդյունավետությունը, ժամանակին օգտագործել գիտության և տեխնիկայի նվաճումները, խորացնել մասնագիտացումը։ Կյանքը լիովին հաստատեց կուսակցության այն կանխատեսման ճշմարտությունը, որ գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացման մայրուղին նրա հետագա մասնագիտացումն ու համակենտրոնացումն է, միջտնտեսային կոոպերացիայի խորացումը։ Մեր երկրի մի շարք շրջաններում 1960-ական թվականներից սկսած որոշակի հաջողություններ էին ձեռք բերվել այդ ուղղությամբ (Մոլդավիա, ՌՍՖՍՀ, Ուկրաինա և այլն)։ Հայաստանում միջկոլտնտեսային շինարարությունը բավականին ուշ ծավալվեց։ 1975 թ. միջկոլտնտեսային ձեռնարկությունների թիվը չէր անցնում 34-ից[22]։ 1977 թ. ՀԿԿ Կենտկոմի պլենումը քննարկեց «Միջտնտեսային կոոպերացման և ագրոարդյունաբերական ինտեգրացման բազայի վրա գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումը և համակենտրոնացումը էլ ավելի զարգացնելու մասին» հարցը և կոնկրետ աշխատանքների կատարման ծավալուն պլան մշակեց։ 1979 թ. վերջերին հանրապետությունում արդեն գործում էին 74 միջտնտեսային ձեռնարկություններ, որոնց փայատեր տնտեսությունների թիվն անցնում էր 1000-ից[23]։ Այդ միավորներից 33-ը անասնաբուծական տնտեսություններ էին, 6-ը՝ շինարարական, 5-ը՝ բանջարաբուծական և այլն։ Ուշագրավ է այն փաստը, որ միջկոլտնտեսային ձեռնարկություններում արտադրանքի մեկ միավորի վրա կատարվող աշխատանքային ծախսումները 1,5—2 անգամ, իսկ ինքնարժեքը՝ 1,5 անգամ ցածր է, քան կոլտնտեսություններում ու սովխոզներում։ Միջտնտեսային ձեռնարկությունների հետագա ծավալումը և աշխատանքների կազմակերպման կատարելագործումը հնարավորություն կտան աստիճանաբար գյուղատնտեսական արտադրությունը փոխադրել ժամանակակից արդյունաբերական հիմքերի վրա և շեշտակիորեն բարձրացնել նրա արդյունավետությունը։

Գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրության միավորման լավագույն ձևը, որը կյանքի կոչվեց զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, ագրոարդյունաբերական ինտեգրացիան է։ Այն զգալիորեն նպաստում է մասնագիտացման խորացմանը։ Ինտեգրացման առավել տարածված և հեշտ կազմակերպվող ձևը սովխոզ-գործարանն է։ Հետագայում առաջացան խոշոր, հանրապետական միավորումներ, ինչպես, օրինակ, «Թռչնարդ» միավորումը, որը 1970-ական թվականներին բոլոր տարիների պլանները զգալիորեն գերակատարել է՝ տալով մեր հանրապետության ձվի արդյունաբերական արտադրանքի կեսից ավելին։ Միջտնտեսային կոոպերացիայի զարգաց-

21 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 68, գ. 374, թ. 14։

22 «Народное хозяйство Армянской ССР за 60 лет», с. 139.

23 Նույն տեղում, էջ 138։

ման մասին ՍՄԿԿ Կենտկոմի 1976 թ. հունիսի 6-ին ընդունած որոշման մեջ գրված է. «Գիտատեխնիկական առաջադիմությունը, գյուղատնտեսության մեջ խոշոր մասնագիտացված ձեռնարկությունների և միավորների կազմակերպումը բարենպաստ նախադրյալներ են ապահովում ագրոարդյունաբերական ինտեգրացման հետագա զարգացման, արդյունաբերության հետ գյուղատնտեսական արտադրության օրգանական միավորման և այդպիսով երկրում ագրոարդյունաբերական ձեռնարկությունների ու միավորումների լայն ցանց ստեղծելու համար, որոնց մեծ ապագա է խոստանում»[24]։ Զարգացած սոցիալիզմի տարիներին օբյեկտիվ նախադրյալներ էին ստեղծվել ագրոարդյունաբերական ինտեգրացման համար, որը ինչպես նշել է Լ. Ի. Բրեժնևը, «ոչ միայն նոր կազմակերպական ձև է, այլ սոցիալ-տնտեսական կարևոր երևույթ»[25]։

Մեր հանրապետությունում ագրոարդյունաբերական միավորումները նույնպես բավականին ուշ կազմակերպվեցին։ Սովխոզ-գործարանները հիմնականում ծնունդ առան 1970-ական թվականներին (բացառությամբ Հոկտեմբերյանի խորդենու սովխոզ-գործարանի, որը կազմակերպվեց 1968 թ.)։ Դրանք տավորաբար խոշոր և ամուր տնտեսություններ են, որտեղ, որպես կանոն, գյուղատնտեսական հումքի արտադրությունը ու վերամշակումը մեկ միասնական պրոցես է։ Ինչպես միջտնտեսային կոոպերացումը, այնպես էլ ագրոարդյունաբերական ինտեգրացիան որոշակի ազդեցություն են գործում գյուղի սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման վրա, նպաստում գյուղատնտեսության տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացմանը, աշխատուժի արդյունավետ օգտագործմանը, արտադրության կազմակերպման ձևերի կատարելագործմանը և, վերջին հաշվով, սոցիալիստական սեփականության երկու ձևերի հետագա մերձեցմանը։ Բացի այդ, ագրոարդյունաբերական խոշոր միավորները բարերար ազդեցություն են գործում բնակավայրերի խոշորացման, դրանք քաղաքատիպ ավանների վերափոխելու, գյուղի և քաղաքի միջև եղած տարբերությունների վերացման հարցի լուծման վրա։

Միջտնտեսային կոոպերացիայի և ագրոարդյունաբերական ձեռնարկությունների կառուցումն ու զարգացումը զգալիորեն նպաստում է նաև գյուղական բնակչության աշխատանքային թերբեռնվածության վերացմանը, որը մեր հանրապետության համար կենսական կարևոր նշանակություն ունի։ Հատկապես լեռնային շրջաններում, որտեղ աշխատանքի խիստ սեզոնայնությունը բացասաբար է անդրադառնում գյուղացիության եկամուտների ավելացման վրա, մարդիկ հաճախ հեռանում են գյուղից։ Գյուղական բնակչության անկազմակերպ միգրացիան հնարավորություն չի տալիս արդյունավետ օգտագործելու հողն ու աշխատուժը։ Ուստի՝ բոլոր միջոցները ձեռք են առնվում աշխատուժը տեղում, տարվա ընթացքում աշխատանքով ապահովելու համար։ Այդ նպատակով գյուղատնտեսական և ագրոարդյունաբերական խոշոր միավորումներ կազմակերպելուց բացի, կուսակցությունը հատուկ ուշադրություն է դարձնում գյուղական վայրերում (որտեղ աշխատուժի ավելցուկ գոյություն

---

24 «Միջտնտեսային կոոպերացման և ագրոարդյունաբերական ինտեգրացման բազայի վրա գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումն ու համակենտրոնացումը էլ ավելի զարգացնելու մասին, ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը», Երևան, 1976, էջ 12։

25 Լ. Ի. Բ ր ե ժ ն և, Լենինյան կուրսով, հ. 2, Երևան, 1970, էջ 681։

ունի) արդյունաբերական ձեռնարկություններ կամ դրանց մասնաճյուղեր կառուցելու վրա։ Միայն 10-րդ հնգամյակի տարիներին հանրապետության ավաններում ու գյուղերում կազմակերպվեցին 70 նման ձեռնարկություններ։ Աշխատուժի արդյունավետ օգտագործման և հասարակական բարիքների արտադրությունն ավելացնելուն զգալիորեն նպաստում է նաև գյուղական վայրերում տնայնագործական արդյունաբերության զարգացումը։ Հաշվի առնելով, որ հանրապետության գյուղական վայրերում աշխատուժի որոշակի ավելցուկ գոյություն ունի, ՀԿԿ XXVII համագումարը խնդիր դրեց 11-րդ հնգամյակում ընդլայնել շրջաններում ու գյուղական վայրերում գործող արդյունաբերական ձեռնարկությունների ցանցը և հասնել այն բանին, որ գյուղական բնակչությունն ամբողջ տարվա ընթացքում մասնակցի հանրօգուտ աշխատանքներին։

Այսպիսով, ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թ. մարտյան պլենումից հետո, հետևողական կենսագործելով կուսակցության ագրարային քաղաքականության նոր կուրսը, հիմնական շեշտը գրվել է սովետական գյուղի կոմպլեքսային զարգացման վրա, որն ընդգրկում է գյուղացիության արտադրական, կուլտուրական և հասարակական կյանքի բոլոր բնագավառները։ Խոշոր աշխատանքներ են կատարվել գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման և արտադրական հարաբերությունների հետագա կատարելագործման ուղղությամբ։ ՍՄԿԿ XXVI համագումարը, ամփոփելով սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման բնագավառում ձեռք բերված հաջողությունները, նրա հետագա առաջընթացի լայն ծրագիր մշակեց, որի կենսագործմանը հաջողությամբ ձեռնամուխ է եղել սովետական ժողովուրդը։

КОМПЛЕКСНАЯ ПРОГРАММА РАЗВИТИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА

ГУРГЕН ГЕГАМЯН

Резюме

После Мартовского (1965 г.) пленума ЦК КПСС, постоянно совершенствуя экономические и общественные отношения деревни, партия создала реальные условия для комплексного развития села. За прошедший период проделана значительная работа по упрочению материально-технической базы сельского хозяйства, мелиорации и химизации. Наряду с этим было обращено особое внимание на совершенствование производительных отношений деревни. В достижении дальнейшего развития сельскохозяйственного производства большое место отводится внедрению межхозяйственной кооперации и агропромышленной интеграции. XXVI съезд КПСС, обобщив достигнутые успехи, поставил новые задачи перед тружениками села, решение которых будет содействовать повышению уровня материального благосостояния советского народа.